



«Կրթություն առանց սահմանների» ՀԿ

***ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ***

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ**

Հետազոտության թեման՝ Խոսքային հաղորդակցում

Առարկան՝ Մայրենի

Հետազոտող ուսուցիչ՝ Փոշոտյան Հայկուհի

Ղեկավար՝ Բաբաջանյան Վերոնիկա

*Ուսումնական հաստատություն՝ Պ.Սևակի անվան թիվ 123
հիմնական դպրոց*

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1. ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ	
1.1 Խոսքային հաղորդակցման էությունը և տեսակները.....	5
1.2 Խոսքային հաղորդակցման նշանակությունը և դերը կրտսեր դպրոցում.....	7
ԳԼՈՒԽ 2. ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՄԱՅՐԵՆԻԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ	
2.1 Բանավոր խոսքի զարգացման մեթոդներն ու սկզբունքները.....	10
2.2 Լեզվական գիտելիքների ուսուցման դերը կրտսեր դպրոցականների բանավոր խոսքի զարգացման գործում.....	14
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	21
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվական հասարակության և նորագույն տեխնոլոգիաների ներդրման շրջանում առավել քան կարևորվում է խոսքային հաղորդակցման դերը կրտսեր դպրոցականների դաստիարակության ու ուսուցման գործընթացի կազմակերպման, սովորողների անհատական զարգացման գործում: Կենդանի, անմիջական հաղորդակցման միջոցով իրագործվում է ոչ միայն կրթական, այլ նաև սոցիալական, մշակութային, բարոյական, գեղագիտական արժեքների փոխանցումը կրտսեր դպրոցականներին: Հաղորդակցման ընթացքում և հաղորդակցման միջոցով է կատարվում ուսուցչի դաստիարակչական ներգործությունները իր սաների գիտակցության ու վարքի վրա: Ուստի կարևոր է հետազոտությունների միջոցով պարզել մանկավարժական հաղորդակցման առանձնահատկությունները կրտսեր դպրոցում ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններում, դիտարկել հաղորդակցման իրականացման մեթոդներն ու պայմանները հանրակրթական գործունեության մեջ:

Կրտսեր դպրոցի առջև դրված կարևորագույն խնդիրներից մեկը աշակերտների բանավոր ու գրավոր խոսքի զարգացումն է, որի հիմքերը դրվում են նախադպրոցական փուլում: Խոսքային հաղորդակցական կարողությունները ձևավորվում են տարրական դպրոցում և ամրապնդվում հիմնական դպրոցում, որի հարցում կարևորվում է հայոց լեզվի դերը: Խոսքի զարգացման շնորհիվ է տեղի ունենում դպրոցականի սոցիալականացումը, հոգեկան զարգացումը, մտածողության զարգացումը:

Խոսքի զարգացման խնդիրներից առավել կարևորվում են երեխաների կապակցված խոսքի զարգացումը, քանի որ կապակցված խոսքը մտավոր գործունեության բարձրագույն ձևն է, և դրա զարգացման աստիճանով որոշվում է երեխայի խոսքային և մտավոր զարգացման մակարդակը:

Արդի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց երեխաների առօրյայի անբաժան մասն են կազմում համակարգիչները, համակարգչային խաղերը, որոնք չեն ուղեկցվում խոսքային հաղորդակցմամբ: Կրտսեր դպրոցական տարիքի երեխաները մեծ դժվարություններ են ունենում շփման, հաղորդակցման գործընթացում, նրանք հաճախ խոսում են առանց զգացմունքայնության, նրանց մոտ զրեթե բացակայում է գիտական խոսքի մշակույթի նորմերին ու

օրինաչափություններին համապատասխան խոսքը: Մեր օրերում դժվար է հանդիպել երեխայի, որը լիարժեք զարգացած կապակցված խոսք ունենա, կարողանա անկաշկանդ և գրագետ հաղորդակցվել, բանավոր խոսքը լինի ճկուն, սահուն և անսխալ:

Կրտսեր դպրոցականների խոսքային հաղորդակցման հետ կապված հարցերի լուծման անհրաժեշտությունից էլ բխում է հետազոտական աշխատանքի **արդիականությունը**:

Հետազոտական աշխատանքի **նպատակը** կրթության ոլորտում խոսքային հաղորդակցման իրականացման մեթոդների, խնդիրների բացահայտումը և դրանց լուծման հնարավորությունների նախանշումն է:

Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները**՝

- ուսումնասիրել խոսքային հաղորդակցման էությունը և տեսակները,
- ուսումնասիրել խոսքային հաղորդակցման նշանակությունը և դերը կրտսեր դպրոցում,
- հետազոտել բանավոր խոսքի զարգացման մեթոդներն ու սկզբունքները,
- բացահայտել լեզվական գիտելիքների ուսուցման դերը կրտսեր դպրոցականների բանավոր խոսքի զարգացման գործում,
- հետազոտված նյութի հիման վրա կատարել եզրակացություն:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը կազմված է երկու գլխից, որոնք ունեն 4 ենթագլուխ, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1.1 Խոսքային հաղորդակցման էությունը և տեսակները

«Հաղորդակցություն» բառի միջազգային անվանումը ծագել է լատիներեն communico (մասնակցել, ընդհանուր դարձնել, տիրել միասին, ինչպես նաև միավորել, շփվել) բառից: «Հաղորդակցությունը տեղեկությունների փոխանցման գործընթացն է, որը կատարվում է իմաստավոր շարժումներով (ժեստեր), խոսքով, դեմքի արտահայտություններով, մամուլի կամ էլեկտրոնային հաղորդագրություններով, հեռախոսով, ռադիոյով, համացանցով, հեռուստատեսությամբ և այլ եղանակներով»¹: Այսպիսով, հաղորդակցումը հասարակական սուբյեկտների (անձ, սոցիալական խումբ) փոխներգործության գործընթաց է, որի ժամանակ տեղի է ունենում տեղեկության, փորձի, գիտելիքների, կարողությունների և գործունեության արդյունքների փոխանակում:

Հաղորդակցումը բարդ գործընթաց է, որն ունի իր կառուցվածքը, բաղադրատարրերը, մեխանիզմները, գործընթացային փուլերը և կողմերը:

Հաղորդակցման գործընթացի կառուցվածքային տարրերն են՝

- հաղորդակցման սուբյեկտները,
- հաղորդակցման միջոցները,
- հաղորդակցման պահանջմունքները, շարժառիթները և նպատակները,
- հաղորդակցման ընթացքում փոխներգործության ու փոխազդեցության, ընկալման ու փոխըմբռնման մեխանիզմները,
- հաղորդակցման արդյունքները:

Հաղորդակցման սուբյեկտները մարդիկ են: Հաղորդակցումը կարող է տեղի ունենալ առնվազն երկու և ավելի մարդկանց միջև: Հաղորդակցվում են առանձին մարդիկ՝ սուբյեկտները, իսկ այդ հաղորդակցության բնույթը կախված է այն բանից, թե ինչպիսի հարաբերություն գոյություն ունի նրանց միջև: Այս իմաստով այն կարող է ունենալ սուբյեկտ-սուբյեկտ և սուբյեկտ-օբյեկտ կառուցվածքը: Առաջին դեպքում հաղորդակցվող անձինք իրար վերաբերում են որպես սուբյեկտների, իսկ երկրորդ

¹ Ալեքսանյան Ա. Ս., Միջանձնային հաղորդակցման իրականացումը կրթական գործընթացում, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015, 263 էջ:

դեպքում՝ որպես օբյեկտի, այսինքն՝ որպես միջոցի և գործիքի: Ելնելով հաղորդակցման բնույթից, կարող ենք նշել, որ հաղորդակցվողներից յուրաքանչյուրը կարող է միաժամանակ դիտվել և՛ որպես սուբյեկտ, և՛ որպես օբյեկտ: Որպես սուբյեկտ նա ճանաչում է իր գործընկերոջը, արտահայտում է իր վերաբերմունքը նրա հանդեպ և այլն: Միաժամանակ նա հանդես է գալիս որպես ճանաչողության օբյեկտ նրա համար, ում հետ հաղորդակցվում է:

Երկխոսությունը երկու անձի միջև խոսքային հաղորդակցումն է, որը կարող է տեղի ունենալ թե՛ դեմ առ դեմ, թե՛ հեռակա: Այն ճանաչողության հիմնական ձև է, առավել ևս ժամանակակից տեղեկատվական հասարակության մեջ, որտեղ երկխոսության համար մարդիկ օգտվում են տեղեկատվական և հաղորդակցման տարբեր միջոցներից: Պետք է փաստենք, որ անկախ դրանց տեսակներից, հաղորդակցումը բոլոր դեպքերում պահանջում է հատուկ մշակույթի ձևավորում, որի կարիքն այսօր հատկապես ակնառու է: Ինչպիսին էլ լինի երկխոսության յուրաքանչյուր մասնակցի դերերի հարաբերակցությունը, բոլոր դեպքերում էլ գործ ունենք տեղեկություն «հաղորդողի» և «ընդունողի» հետ: Դրանց միջև կառուցված հարաբերությունների որակից է կախված հաղորդակցման արդյունքը:

Հաղորդակցման միջոցները կարող են լինել խոսքային (վերբալ)՝ (գրավոր և բանավոր) և ոչ խոսքային (ոչ վերբալ): Բնականաբար, հաղորդակցման ընթացքում, իր դերով ու նշանակությամբ, առանձնանում է խոսքային միջոցը, որովհետև վերջինս բնորոշ է միայն մարդկանց և, բացի դրանից, հանդես է գալիս որպես ամենաուժեղ գրգռիչ: Խոսքային ազդեցության արդյունավետությունը պայմանավորված է լեզվական միջոցների հարստությամբ ու բովանդակությամբ: Այս կապակցությամբ ուշադրության է արժանի Ա.Ա. Լեոնտևի տեսությունը, որում հաղորդակցումը դիտարկվում է նախ և առաջ որպես խոսքային գործունեություն²: Անշուշտ, սա բնավ էլ չի նշանակում, որ այն պետք է նույնացնել խոսքային գործունեության հետ. խոսքը սոսկ գործիք և միջոց է մարդկային հաղորդակցության իրականացման համար:

² Леонтьев А.А. Язык, речь, речевая деятельность. - М.: Просвещение, 1969. - с. 27.

1.2 Խոսքային հաղորդակցման նշանակությունը և դերը կրտսեր դպրոցում

ՀՀ հանրակրթության պետական կրթակարգում սահմանվում են հաղորդակցական այն պարտադիր կարողություններն ու հմտությունները, որոնց պետք է տիրապետի կրտսեր դպրոցականը: Ըստ կրթակարգի ենթաբաղադրիչի՝ ուսումնառության արդյունքում յուրաքանչյուր կրտսեր դպրոցական պետք է ձեռք բերի հաղորդակցական հետևյալ կարողություններն ու հմտությունները³

- ա) լսել, ընկալել և համարժեք վերաբերմունք դրսևորել,
- բ) բանավիճել, բանավոր և գրավոր տրամաբանված խոսք կառուցել,
- գ) ըստ նշանակության և տեղին օգտագործել սովորած եզրույթները, հասկացությունները և արտահայտությունները,
- դ) հասկանալ և ճիշտ օգտագործել հաղորդակցման ոչ խոսքային միջոցները և այլն:

Հաղորդակցական կարողությունները չեն ձևավորում անփոփոխ համակարգ. դրանք կարող են անընդհատ զարգանալ՝ իրենց հերթին նպաստելով անձի տարբեր հնարավորությունների և որակների զարգացմանը: Այսպես՝ եթե երեխան ձեռք է բերում հաղորդակցման համար անհրաժեշտ կարողություններ, ապա կարողանում է մասնակցել տարբեր քննարկումների, ակտիվորեն ու ազատ արտահայտել սեփական կարծիքը, անկաշկանդ ինքնադրսևորվել, հանդես գալ տարբեր հիմնավորումներով, չկաշկանդվել տարատեսակ փոխհարաբերություններում և ձեռք բերել նոր գիտելիքներ ու հմտություններ:

Կախված հաղորդակցության նպատակից, տեղից, ժամանակից և հասցեատիրոջից՝ տարբերակում են շփման ու հաղորդակցման տարբեր ձևեր ու միջոցներ: Ըստ այդմ էլ շփումն ու հաղորդակցումը կարող են լինել⁴

- խոսքային կամ ոչ խոսքային,
- բանավոր կամ գրավոր,
- միջանձնային կամ զանգվածային,
- մտերմիկ կամ գործնական, պաշտոնական և այլն:

Բանավոր խոսքի զարգացումը կարելի է համարել հայոց լեզվի ուսուցման առաջնահերթ և ամենակարևոր խնդիրներից, ինչպես նաև այն ընդհանուր ուսուցման

³ Հանրակրթական պետական կրթակարգ, Երևան, «Անտարես» հրատարակչություն, 2004, էջ 27:

⁴ Խոսք և հաղորդակցություն 2: Աշխատանքային տետր / Գ.Հ. Թերզյան, Կ. Թորոսյան, Հ. Խաչատրյան, Երևան, Զանգակ հր., 2016, էջ 27:

հիմնաքարն ու չափանիշներից մեկն է: Աշակերտի բանավոր խոսքի զարգացումը հայոց լեզվի դասավանդման ամենակենտրոնական հարցերից է: Մտքի հարստության համար անհրաժեշտ է խոսքի հարստություն: Խոսքը կառուցվում է բառապաշարով, ժողովրդական աֆորիզմներով ու դարձվածքներով, քերականական ձևերով, ոճական հնարքներով⁵:

Կրտսեր դպրոցականի խոսքը ձևավորվում է երեք օջախներում՝ տանը, դպրոցում և հասարակական միջավայրում: Նայած թե երեխան խոսքային ինչպիսի միջավայրում է մեծանում, ինչ է լսում նա իր մեծերից տանը, փողոցում, կինոյում, թատրոնում, ըստ այդմ էլ ձևավորվում է նրա խոսքը⁶:

Գաղտնիք չէ, որ շրջապատից հաճախ կրտսեր դպրոցականի խոսք են թափանցում գրական լեզվում չընդունված բառեր ու արտահայտություններ, և դպրոցում պետք է ուղիներ փնտրել այդ խնդիրները մանկավարժորեն լուծելու համար: Հասարակական միջավայրում մաքուր գրական լեզվի համար պայքարն ունի համընդհանուր նշանակություն: Իսկ հասարակական միջավայրի մարդիկ երեկվա երեխաներն են, ուրեմն պիտի հետևողական ու կազմակերպված աշխատանք տանել կրտսեր դպրոցականի խոսքի զարգացման ուղղությամբ:

Չպետք է մոռանալ, որ կրտսեր դպրոցականի լեզվական գիտելիքներով է պայմանավորված նաև մյուս առարկաների հաջող ուսումնասիրումը: Մայրենի դասընթացի հիմնական նպատակներից մեկն էլ գրական կենդանի լեզվի ուսուցումն է, աշակերտի մեջ խոսքի կուլտուրայի մշակումն ու զարգացումը, որովհետև առանց մայրենի լեզվի տիրապետման հնարավոր չէ պատկերացնել ու իրականացնել երեխայի լիարժեք կրթությունն ու դաստիարակությունը: Լեզվի մեջ և լեզվի միջոցով է, որ երեխան շրջապատի, բնության ու հասարակության մասին ստանում է այն տեղեկություններն ու գիտելիքները, որոնք անհրաժեշտ են մարդուն այդ բնության ու հասարակության մեջ ապրելու, աշխատելու և պայքարելու համար:

Խոսքի զարգացման համար կրտսեր դպրոցականի դպրոցական տարիքն անփոխարինելի մի ժամանակաշրջան է: Այս տարիքում երեխան, երբեմն իր համար էլ աննկատելի կերպով, հազարավոր նոր բառեր, արտահայտություններ է սովորում,

⁵ Շահբազյան Ս., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան 1958, էջ 348:

⁶ Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, էջ 412:

ընկալում է լեզվի այն հիմնական ատաղձն ու յուրահատկությունները, որը հաճախ շատ մեծ ջանքերի գնով է հաջողվում չափահաս մարդկանց⁷:

Դասավանդման ընթացքում այս հանգամանքը պետք է հաշվի առնի ուսուցիչը տարրական դասարանները դարձնի երեխայի խոսքի զարգացման հիմնական օղակ, մայրենի լեզվի բառապաշարի հիմնական ֆոնդի ուսուցման ժամանակաշրջան: Առհասարակ ուսուցման ողջ համակարգի նպատակը երեխայի ընդհանուր զարգացումն է, որն առաջին հերթին իրականացվում է խոսքի միջոցով և արտահայտվում է խոսքի մեջ: Հենց այդ առումով էլ աշակերտի խոսքի զարգացումը մայրենի լեզվի տարրական և հիմնական դասընթացի կարևորագույն խնդիրներից մեկը պետք է դարձնել:

Գրավոր խոսքի տիրապետման հիմնական միջոցը մնում է բանավոր խոսքը, որովհետև այն հենվում է բանավոր խոսքի վրա: Բանավոր խոսքը պետք է լինի անմիջական, ունենա բարձր արտահայտչականություն, ճիշտ արտահայտի մարդկային հույզերը, ապրումները, տրամադրություններն ու զգացմունքները:

Կրտսեր դպրոցականի բանավոր խոսքի զարգացմանն ուշադրություն դարձնելիս պետք է շեշտը դնել հենց այս առանձնահատկությունների զարգացման վրա՝ զարգացնելով երեխայի ստեղծագործական մտածողությունը, ձևաբանական իրողությունների գրական ճիշտ նորմերին տիրապետելը:

Կրտսեր դպրոցականի բանավոր խոսքի զարգացման համար բացառիկ կարևոր ուղենշային դեր ունի ուսուցչի խոսքը, որը դիտվում է իբրև կենդանի, զարգացող ու ծավալվող, երեխայի հոգու հետ հաղորդակցվող, նրա հետաքրքրություններին ու որոնումներին բավարարություն տվող խոսք, որովհետև բնական ձևով արտասանվող կենդանի ու անմիջական խոսքն ավելի խորն է ազդում մարդու վրա, քան՝ կարդացածը: Մայրենի լեզվի դասերին պետք է խուսափել տեսական կանոնների և սահմանումների, քերականական իրողությունների բերանացի շարադրումից, որոնք աշակերտներից պահանջում են միայն լսել, ընկալել և նույնությամբ վերարտադրել⁸: Այս առումով ուսուցչի խոսքը պետք է լինի պարզ, հստակ, մատչելի ու գրավիչ, որպեսզի երեխաներին տանի իր հետևից, սիրել տա հայոց լեզուն:

⁷ Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, էջ 404:

⁸ Գյուլամիրյան Զ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան 2009, էջ 129:

ԳԼՈՒԽ 2. ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՄԱՅՐԵՆԻԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

2.1 Բանավոր խոսքի զարգացման մեթոդներն ու սկզբունքները

Ուսուցչի բանավոր խոսքը, որ լսում և հետագայում վերարտադրում են աշակերտները, նախնական ուսուցման անհրաժեշտ մասն է կազմում: Երեխաներն ավելի շատ սիրում են լսել, քան թե կարդալ, հենց այն պատճառով, որ առաջին երկուերեք տարվա ընթացքում ընթերցանության գործընթացը հոգնեցնում է նրանց: Բացի այդ երեխաներին պետք է սովորեցնել ոչ միայն կարդալ, այլև ուշադիր լսել, իսկ հետո յուրացնել և հաղորդել լսածը:

Կրտսեր դպրոցականների բանավոր խոսքի զարգացման համար կարևոր նշանակություն ունեն *զրույցները*: Երեխաների դպրոց գնալու առաջին իսկ օրից սկսած ուսուցիչը նրանց հետ զրուցելու բազմաթիվ առիթներ է ունենում: Սկզբնական շրջանում այդ զրույցը կարող է պարզ հարց ու պատասխանի բնույթ կրել, իսկ հետագայում աշակերտների գիտելիքների ընդարձակմանը և բառապաշարի հարստացմանը զուգընթաց, այն կարող է աստիճանաբար վերածվել երկկողմանի զրույցի: Այսպիսի զրույցների համար թեմաներ կարող են լինել աշակերտների ընկերները, դասերը, դպրոցական խաղերն ու պարապմունքները, ընտանի և վայրի կենդանիները, բնական ու հասարակական երևույթները՝ ելնելով աշակերտի տարիքային առանձնահատկություններից: Այս զրույցների ընթացքում աշակերտները հնարավորություն են ունենում խոսել պարզ, հակիրճ, կապակցված կերպով պատասխանել տրված հարցերին կամ շարադրել իրենց իմացածն այս կամ այն հարցի վերաբերյալ. դա մի կողմից նրանց խոսել, իրենց մտքերը շարադրել է սովորեցնում, մյուս կողմից՝ ուսուցչին հնարավորություն է տալիս հղկել, մշակել ու մաքրել նրանց լեզուն: Հետևաբար այսպիսի զրույցներին որքան կարելի է, շատ տեղ պետք է տալ ուսուցման գործընթացում:

Արտասահմանյան լավագույն դպրոցներում ուսման առաջին տարվա ընթացքում (6-ից մինչև 8 տարեկան երեխաներին) հաղորդվում է մեկ տասնյակ զրույց, բայց ոչ ավելի: Երկրորդ տարվա ընթացքում այդ բոլոր զրույցները նորից կրկնվում են՝ լրացումներով ու բացատրություններով, և նրանց գումարվում է ևս 10-15 զրույց: Ուսման երկրորդ տարվա ընթացքում նորից կրկնվում են ինչպես առաջին, այնպես էլ

երկրորդ տարվա ընթացքում անցած զրույցները՝ նոր մանրամասնություններով ու բացատրություններով և այլն: Այս մեթոդը հոգեբանական հիմք ունի: Երեխայի բազմաթիվ տպավորություններով չձանրաբեռնված հոգին ընդունակ է ամեն տեսակի հստակ պատկերների ընկալմանը և միևնույն ժամանակ ընդունակ չէ ոչ վերացարկումների, ոչ էլ այն հետևողականությանը, որը պահանջվում է լեզվի ուսումնասիրման համար: Բայց նա, ով կցանկանար այդ կառուցումն սկսել ժամանակից շուտ, երեխայի հոգուց կպահանջեր մի բան, որը նա չի կարող տալ:

Մի անգամ արդեն հաղորդված զրույցները պետք է հետագայում անընդհատ կրկնվեն, ոչ նրա համար, որ վերականգնվի մոռացվածը, այլ նրա համար, որ կանխվի մոռանալու հնարավորությունը: Մոռացվածը վերհիշելու համար կրկնությունն արդեն ցույց է տալիս ուսուցման թերությունը: Երեխաներն իրենք բոլորովին չեն սիրում կրկնել այն, ինչ սովորել են ու մոռացել, և շատ են սիրում պատմել այն, ինչ հիշում են:

Առաջին անգամ պատմելով մի որևէ իրադարձություն, ուսուցիչը պետք է հաղորդի նրա գլխավոր գծերը և երկու-երեք հետաքրքրական գեղեցիկ մանրամասնություն: Եթե ուսուցիչը հենց առաջին անգամից իրադարձությանը կապի բազմաթիվ մանրամասնություններ ու բացատրություններ, ապա ամբողջ զրույցը կխարխլվի երեխայի գլխում:

Երեխաների պատմելով իրադարձությունը՝ պետք է հատուկ ընդգծումով շեշտել փաստերն ու հատուկ անունները, հետո երեխաներին դիմել հարցերով, իհարկե սկզբից այնպիսի հարցերով, որոնց պատասխանելով երեխաները հաղորդեն իրադարձության գլխավոր գծերը: Այնուհետև դրան հաջորդում է մանրամասնություններն սպառող հարցերի մի շարք:

Այնուհետև պետք է ավելի ընդունակ երեխաներից պահանջել, որ նրանք կապակցված և հաջորդականորեն պատմեն բոլորը, ինչ լսել են: Այդ միջոցին պետք է պատմողին ընդհատել միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում: Երբ աշակերտները վերջացրել են պատմելը, ուրիշները լրացնում են նրա բացթողումները:

Շատ օգտակար է, որ ուսուցիչը որոշ ժամանակ անց, ասենք հաջորդ տարին, անձամբ պատմի աշակերտների կողմից արդեն յուրացված այդ նույն պատմվածքը այնպիսի նոր մանրամասնություններով և էպիզոդներով, որոնք երեխաները դեռ

չգիտեն: Աշակերտները պետք է նկատեն, թե ուսուցչի պատմածի մեջ ինչ նոր բան է ավելացված և այդ լրացումը խոր կարմատավորվի նրանց հիշողության մեջ:

Չափազանց կարևոր է երեխաների մեջ սկզբից ևեթ մշակել սեփական խոսք կառուցելու կարողություն, լեզվական ճաշակ ու լեզվազգացողություն, իսկ դրա համար պետք է միշտ ազատություն տալ երեխային մտածելու և խոսելու՝ հետևելով նրա խոսքի գրագիտական ճշտությանը: Պետք է պահանջել, որ աշակերտները դասը ներկայացնեն իրենց բառերով, չկառչեն դասագրքի բառերից, վերարտադրեն սեփական բառերով, ներկայացնեն գլխավոր գաղափարը՝ միևնույն ժամանակ թույլ չտալով օգտագործել առօրյա խոսակցական բառեր: Խոսքի զարգացմանը նպաստում է տրված բառերով կապակցված տեքստի կազմումը: Նմանատիպ աշխատանքները պետք է կատարել դպրոցում՝ բացառելով ծնողի օգնությունը:

Կրտսեր դպրոցականների բանավոր խոսքի զարգացմանը նպաստում է նաև **հեքիաթներ պատմելը**: Երեխաները չափազանց շատ են սիրում հեքիաթներ, մեծ ուրախությամբ ու հաճույքով են պատմում իրենց լսած ու կարդացած հեքիաթները, ուստի այն պետք է օգտագործել աշակերտների բանավոր խոսքը զարգացնելու և կատարելագործելու համար:

Երեխայի խոսքի զարգացմանը մեծապես նպաստում է **գեղարվեստական տարրեր ստեղծագործությունների ընթերցումը**: Գրքերի թեման պետք է համապատասխանի աշակերտների տարիքային առանձնահատկություններին և հետաքրքրություններին, լինի ոչ ծավալուն: Ընթերցանության և ուսուցման համար ընտրված թեմաները պետք է լինեն հայրենիքի, հերոսական սխրանքների, աշխատասիրության, բարեկամության, պատվախնդրության, բարության, ճշմարտախոսության, պատասխանատվության վերաբերյալ, որպեսզի ուսուցման ընթացքում հնարավոր լինի երեխայի անձի ձևավորումն իրականացնել բարոյական բարձր չափանիշներին համապատասխան: Հատկապես ուշադրություն պետք է դարձնել ընթերցված նյութի զգայական կողմին, կարծիքներ և տպավորություններ փոխանակել, կապել այն երեխայի սեփական փորձի հետ՝ այդ ողջ ընթացքում զարգացնելով խոսքը, երևակայությունը և մտածողությունը: Իսկ արտադասարանական ընթերցանության միջոցով պետք է զարգացնել գրքերի բովանդակությունն ինքնուրույն ընկալելու և ներկայացնելու կարողությունը:

Կրտսեր դպրոցականների տրամաբանական մտածողության, հաղորդակցական կարողությունների ձևավորման նպատակով ևս պետք է կատարել տարբեր վարժություններ: Օրինակ՝ տեքստի խառնված նախադասությունների շտկում, պլանի կազմում և դրան համապատասխան պատմության հորինում:

Կրտսեր դպրոցում անհրաժեշտ է զարգացնել **տեքստի վրա ինքնուրույն աշխատելու և դատողություններ անելու կարողություններ**: Նրանք պետք է կարողանան տեքստից առանձնացնել հերոսներին բնութագրող բառերն ու արտահայտությունները, բնության նկարագրության հատվածները, կարողանան հակադրել հերոսներին և նրանց արարքները, վերհանեն դրանց դրդապատճառները, դրսևորեն գնահատողական վերաբերմունք, արտահայտեն իրենց դիրքորոշումը: Այս ամենը պետք է իրականացվի ուսուցչի ուղղորդմամբ, որպեսզի աշակերտներն ավելի անկաշկանդ ու հիմնավորված կարողանան ներկայացնել իրենց տեսակետներն ու կարծիքները, նրանց խոսքն ունենա տրամաբանված ու կուռ կառուցվածք: Աշակերտներին գիտելիքները պետք է տրվեն ոչ այնքան դրանք իմանալու, որքան դրանց վերաբերյալ դատելու կարողություն ձևավորելու նպատակով, որովհետև միտքը կատարելագործվում է ավելի շատ մտածելու, քան սերտելու ընթացքում:

Կրտսեր դպրոցում բառապաշարի հարստացման միջոցով պետք է ընդլայնել աշակերտների մտահորիզոնը, հարստացնել գիտելիքները: Այդ աշխատանքներն իրականացվում են բառակազմական, բառի մասին բացատրման և նրա ճիշտ գործածման վերաբերյալ վարժությունների միջոցով: Այդ նպատակով կատարում ենք ճանաչողական, կիրառական և ստեղծագործական բնույթի վարժություններ: Աշակերտին պետք է վարժեցնել տեքստում ճանաչել նոր բառը, տեքստում գտնել բացատրությունը, այն կիրառել խոսքում՝ կազմելով բառակապակցություններ, նախադասություններ: Այս գործընթացը պետք է կրի շարունակական բնույթ, որպեսզի աշակերտի մեջ ձևավորվի նյութի մեջ նոր բառի ճանաչման ու ընկալման կարողություն:

Աշակերտների խոսքի զարգացման, կապակցված խոսքի ձևավորման համար կազմակերպվում են տարբեր խոսքային իրավիճակներում խոսք կառուցելու, երկխոսություններ և մենախոսություններ ստեղծելու կարողություններին միտված

աշխատանքներ, աշակերտներին հանձնարարվում է վերարտադրել ընթերցած նյութի բովանդակությունը, այն կարդալ դերերով, բեմադրել:

Ամփոփիչ դասերը ևս նպաստում են կրտսեր դպրոցականների բանավոր խոսքի զարգացմանը: Ամփոփիչ դասերին, եթե միայն ուսուցիչը դրանք լավ է նախապատրաստում, երեխաները սովորում են ինքնուրույն խոսք կառուցել, ընդհանրացումներ կատարել, խոսել ու դատել, եզրակացություններ անել, որոնք բանավոր խոսքի մշակման և կատարելագործման համար շատ կարևոր նշանակություն ունեն:

Կրտսեր դպրոցականների բանավոր խոսքի զարգացմանը նպաստում են նաև հանդեսները, աշակերտական ցերեկույթներն ու հավաքները, եթե միայն դրանք լավ են նախապատրաստվում: Սրանից հետևություն, որ դպրոցում որքան հնարավոր է շատ պետք է կազմակերպվեն միջոցառումներ: Աշակերտները միջոցառումներին մասնակցում են բարձր ոգևորվածությամբ, սովորում շատ օգտակար բաներ և բարձրանում է խմբային համագործակցությունը:

Կրտսեր դպրոցականների խոսքի զարգացումը ոչ միայն մայրենի լեզվի ուսուցչի, այլև մնացած բոլոր ուսուցիչների հոգածության առարկան պետք է լինի: Միայն խոսելիս աշակերտին պետք է ուղղել ամեն տեղ ու ամենուրեք, որպեսզի նա ինքն իր լեզվի նկատմամբ մշտական հսկողություն սահմանի և խոսի այնպես, ինչպես պահանջվում է:

2.2 Լեզվական գիտելիքների ուսուցման դերը կրտսեր դպրոցականների բանավոր խոսքի զարգացման գործում

Մայրենի լեզվի տարրական դասընթացը բաժանվում է երկու բաժինների՝ լեզվական նախագիտելիքներ և լեզվական տարրական գիտելիքներ:

Ե՛վ նախագիտելիքները, և՛ լեզվական տարրական գիտելիքները անցնում ենք համակցված ձևով, ընթերցանության հետ համատեղ: Տեղին է նկատել պրոֆ. Ա.Ե. Տեր-Գրիգորյանը՝ ասելով. «Մայրենի լեզվի տարրական դասընթացը քերականական նյութերը վերցնելիս աչքի առաջ է ունենում աշակերտների ընդունակություններն ու ընկալման հնարավորությունները, նրանց լեզվական պաշարը և ուսուցանելիք նյութերի գործնական արժեքը...»⁹: Իսկ մեծանուն լեզվաբան-մեթոդիստ Առ.

⁹ Տեր-Գրիգորյան Ա.Ե., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980թ., էջ 317:

Բահաթրյանը գտնում էր, որ տարրական դասարաններում «քերականությունը չպիտի կազմի դասատվության նպատակ, այլ նա է և պիտի լինի միայն միջոց նպատակի, այն է՝ միջոց գրական լեզուն ճշտությամբ հասկանալու և նրա վերա տեր լինելու»¹⁰:

Հենց այս են նկատի ունեցել մայրենի լեզվի գործող դասագրքերի հեղինակները, որ ստեղծել են ընթերցանության և քերականության միասնական դասագիրք և ընթերցանության ու քերականական նյութի միաձույլ ուսուցում, որը հնարավորություն է տվել լեզվի ուսուցումն ավելի արդյունավետ ու նպատակային դարձնելու: Այս դեպքում երեխաները քերականական կանոններն ու սահմանումներն անգիր սովորելու փոխարեն լեզվական օրինաչափությունները ինքնուրույնաբար կիրառում են իրենց խոսքում, արդյունքում զարգանում են նրանց մտածողությունը, դատողական ունակությունները, որը և քերականության առջև դրված նպատակն է:

Մայրենիի դասագրքերում առանձնակիորեն կարևորվում են և՛ ընթերցողական կարողությունների, և՛ լեզվական նախագիտելիքների ու տարրական գիտելիքների տիրապետման ծրագրային պահանջները:

Դեռևս առաջին դասարանում աշակերտներն ուսումնասիրում են հայերենի հնչյունաշարը (այբուբենը), տարբերակում են ձայնավոր և բաղաձայն հնչյունները, որոշ չափով ծանոթանում դրանց ուղղագրությանը, որն ամրապնդվում է հաջորդ դասարաններում:

Դրան պետք է ավելացնել մեծատառերի ուղղագրության վերաբերյալ այբբենական մասում անցածը, պետք է առաջադրվի նաև բաղաձայնների ուղղագրությանը վերաբերող կամ գրությամբ ու արտասանությամբ տարբերվող բառացանկ՝ ուսուցանելով զուտ գործնական ճանապարհով, առանց կանոնարկման:

Երկրորդ դասարանի դասագիրքը¹¹ կազմված էր թեմատիկ խմբավորման սկզբունքով, որը ընդգրկում է կրտսեր դպրոցականների աշխարհընկալմանը համապատասխան նյութեր և նպատակ է հետապնդում դաստիարակել, զարգացնել երևակայությունը, մտածողությունը, խոսքը, կարդալու կարողությունը, ձևավորելու ինքնուրույն, ինքնավստահ, հոգեպես ու մարմնապես առողջ անձ: Անհրաժեշտության դեպքում դասանյութերը կարելի է տեղաշարժել՝ պայմանով, որ չխախտվի լեզվական

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 319:

¹¹ Մարգարյան Վ., Թորոսյան Կ., Գրիգորյան Ս., Խաչատրյան Հ. «Մայրենի 2», Եր., «Ման-մար» հրատ., 2010թ., 161 էջ:

նյութի տրամաբանական հաջորդականությունը: Այս դասարանում անցնում են հնչյութանության, ուղղագրության, ուղղախոսության և տողադարձի կրկնություն, ամրակայում ու ուսուցում: Բառի կազմության, գործնականում պարզ, բարդ, ածանցավոր բառերի և դրանց ուղղագրության ուսուցումը: Անձ և իր, հատուկ և հասարակ անունների, հոմանիշ, հականիշ բառերի կրկնությունը, ամրապնդումն ու ուսուցումը: Նախադասության, տարբեր կառուցվածք ունեցող նախադասությունների (առարկա, հատկանիշ, գործողություն ցույց տվող բառերի միջոցով) ամրապնդումը և ուսուցումը:

Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցների 3-րդ դասարանում 2008 թվականից գործածության մեջ է մայրենիի նոր դասագիրքը¹², ինչպես նաև այդ դասագրքով պարապող ուսուցիչների առաջին օգնականները՝ մեթոդական ուղեցույցները, որոնք ուղղորդող նշանակություն ունեն և նպաստում են ուսուցչի ամենօրյա ստեղծագործական աշխատանքին:

Երրորդ դասարանում անցնում են՝ 1. ուղղագրություն: Մայրենի լեզվի տարրական դասընթացի առանցքային հարցերից մեկը ուղղագրության ուսուցումն է: Երրորդ դասարանում պետք է կրկնել մինչև այդ անցած քերականական, հնչյունային ուղղագրությանը վերաբերող բառերը՝ զգալի ավելացումով: Հնչյունային ուղղագրությունից պետք է անցնել կրկնակ բաղաձայնների ուղղագրությունը: Այս դասարանում ևս գրությամբ և արտասանությամբ տարբերվող բառերի ցանկը պետք է ավելացնել՝ դրանց ուղղագրությունը գործնական ճանապարհով սովորեցնելու պայմանով, հաճախակի կրկնելու և փոքրիկ բառախմբերով առաջադրելու ձևով: 2. Ձևաբանություն: 3. Շարահյուսություն: Խոսքի մասերի վերաբերյալ ընդհանուր հասկացություն տալու համար որոշվում է, թե բառը ինչի համար կարող է օգտագործվել, ինչ պաշտոն կարող է ունենալ նախադասության մեջ, կառուցողական ինչ բնագավառի մեջ կարող է այն պետք գալ: Բառի՝ խոսքի մաս լինելու հատկությունն այլ կերպ կոչվում է քերականական արժեք, ուստի խոսքի մասերը որոշել նշանակում է բառերի քերականական արժեքը որոշել: Բառի քերականական արժեքը որոշելու համար անհրաժեշտ է գիտենալ բառի քերականական հատկանիշները, այսինքն՝ թե

¹² Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե., «Մայրենի 3», Եր., «Մակմիլան-Արմենիա» հրատ., 2011թ., 160 էջ:

ինչ կատեգորիայի հասկացություններ է արտահայտում, ձևաբանական ինչ հատկանիշներ ունի, շարահյուսական ինչ պաշտոններ կարող է կատարել: Այդ նպատակով նախ բառերը խմբավորվում են ըստ խոսքի մասերի, այսինքն՝ ըստ նրանց արտահայտած հիմնական նշանակության, ապա ուսումնասիրվում են յուրաքանչյուրի ձևաբանական և վերջապես՝ շարահյուսական հատկանիշները:

Չորրորդ դասարանի դասագիրքն իր բովանդակությամբ¹³ կարողացել է ապահովել մայրենի լեզվի և ընթերցանության համակցված ուսուցումը՝ օգտագործելով ընթերցանության տեքստերը: Այս դասարանում անցնում են՝ ուղղագրության, բառերի կազմության, բառիմաստի, բառի ուղիղ և փոխաբերական իմաստների, բառակապակցության ու դարձվածքի կրկնությունը և ուսուցումը: Գոյականի, ածականի, բայի, նրանց ձևափոխությունների (առանց «հոլովում» և «խոնարհում» տերմինները գործածելու) կրկնությունը, թվական անվան, դերանվան ուսուցումը: Նախադասության տեսակներն ըստ կազմության. պարզ և բարդ, ըստ հաղորդակցման նպատակի (կամ հնչերանգի), կոչականի, շեշտի, գծիկի, բացականչական և հարցական նշանների գործածության ուսուցումը:

Ներկայացնենք լեզվական գիտելիքների ամփոփիչ դասի օրինակ:

Դասի թեման - «Խոսքի մասերի վերաբերյալ ունեցած գիտելիքների կիրառումը գործնական աշխատանքներում»:

Համագործակցային դաս

Նպատակը - 1. կարողանալ գործնականում կիրառել իրենց՝ մինչ այդ յուրացրած գիտելիքներն ու կարողությունները խոսքի մասերի վերաբերյալ:

2. զարգացնել համագործակցային աշխատանք կազմակերպելու հմտություն:

3. ձևավորել ինքնուրույն գործնական քայլ կատարելու նախագծման և քայլաշարի մշակման կարողությունները:

Ուսումնական նյութեր - Առարկաներ ներկայացնող պատկերներ, լեզոներ, Հայկ նահապետի դիմանկարը, տիկնիկ Սեթը, ստվարաթղթից պատրաստված ծառ, մրգեր, որոնց վրա գրված են բառեր, զամբյուղիկներ:

¹³ Թորոսյան Կ., Սարգսյան Վ., Խաչատրյան Հ. Չիբուխյան Կ., «Մայրենի 4», Եր., «Ման-մար» հրատ., 2012թ., 190 էջ:

Դասարանը բաժանված է չորս խմբի: Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է որևէ խոսքի մաս՝ գոյական, ածական, բայ, թվական:

Առաջադրանք 1.

Խաղ՝ «Բերքահավաք»

Ծառի վրա կախված են մրգեր, որոնց վրա բառեր են գրված:

Յուրաքանչյուր խմբից մեկ աշակերտ մոտենում է ծառին ու հավաքում համապատասխան խոսքի մասը ներկայացնող բառերը:

«Բերքահավաքից» հետո յուրաքանչյուրն իր զամբյուղից հանում է բառերը և ներկայացնում խոսքիմասային ձևաբանական առանձնահատկությունները:

Առաջադրանք 2.

I խումբ՝ գոյական - պատրաստել կոլած,

II խումբ՝ բայ - ներկայացնել մնջախաղ,

III խումբ՝ ածական - դիմանկարին տալ բնորոշ ածականներ,

IV խումբ՝ թվական - լեզոներով կառուցել «բարձրահարկ շենք»՝ կենդանիների որոշակի քանակով:

Առաջադրանք 3.

Խաղ՝ Օգնենք «Փնթի Սեթին»:

Հարց՝ «Ո՞վ է եկել մեզ հյուր»: Երեխաների գուշակումներից հետո ցույց կտանք տիկնիկը՝ մրոտ դեմքով ու շորերով Փնթի Սեթին, և կխնդրենք նրանց օգնությունը: Նրանք կասեն բառեր ու բառակապակցություններ, որոնք կօգնեն Սեթին մաքուր տղա դառնալու: Օրինակ՝

Գոյականների խումբ - օձառ, ջուր, արդուկ, հագուստ, խոզանակ, մածուկ: Բայերի խումբ - լվացվել, սանրվել, լողանալ, հագնվել, արդուկել:

Ածականների խումբ - կեղտոտ, փնթի, մաքուր, կոկիկ, գեղեցիկ:

Թվականների խումբ - մեկ խոզանակ, երեք դույլ ջուր, երկու օձառ, երկու մետր սրբիչ:

Առաջադրանք 4.

Լուծել խաչբառ, որի հարցադրումները քերականական բնույթի են:

1. Ինչպե՞ս ենք որոշում բայի դեմքը:
2. Ինչպե՞ս են ասում առարկային այլ կերպ:
3. Միևնույն տեսակի առարկաներից բոլորին տրվող անունը կոչվում է ...

4. «Վայրէջք» բառի ածանցը:
5. «Էջ» բառի հնչյունափոխությունը /նշել տառը/:
6. Ինչի՞ց է կազմված պարզ բառը:
7. Խոսքի մաս:
8. Երկրորդ դեմքով օժանդակ բայ:
9. Թվական:
10. Գոյական՝ ժամանակի միավոր:

Խաչբառ

	1	խ	ո	ն	ա	ր	հ	ու	մ
	2	գ	ո	յ	ա	կ	ա	ն	
3	հ	ա	ս	ա	ր	ա	կ		
	4	ք							
	5	ի							
6	ա	ր	մ	ա	տ				
	7	ա	ծ	ա	կ	ա	ն		
	8	ե	ս						
	9	մ	ե	կ					
	10	ր	ո	պ	ե				

Առաջադրանք 5.

Յույց տալ նամակ-խնդրագիր, որն ուղարկել էն գոյականներն ու ածականները. արդյունքում՝ գոյականներն ու ածականները դարձնենք բայեր: Յուրաքանչյուրը ներկայացնում է իր պատրաստած ինքնաշեն գիրքը՝ խոսքի մասերի կիրառության և նրանց հատկանիշների վերաբերյալ:

Խմբերը պատճառաբանված գնահատվում են՝ նախօրոք ներկայացված խմբային աշխատանքի գնահատման չափանիշների սանդղակի օգնությամբ:


Առաջադրանք 6.

Բառակազմական աշխատանքների կատարման ընթացքում կարելի է օգտագործել էլեկտրոնային գրատախտակ:

Խառի նպատակները. պարզ, ածանցավոր, բարդ բառերի տարբերակման, բառը բառակազմական վերլուծության ենթարկելու աշակերտների կարողությունների ամրակայում:

Խաղի ընթացքը. սկզբում ներկայացվեց մի աղյուսակ՝ 3 սյունակի բաժանված՝ պարզ, բարդ, ածանցավոր: Այնուհետև տրվում էին բառեր, աշակերտները այդ բառերը համապատասխանեցրին՝ ըստ սյունակների՝ յուրաքանչյուր բառ ենթարկելով բառակազմական վերլուծության: Տրված բառերի արմատներով և ածանցներով կազմեցին նոր բառեր:

Խաղի հղումը. <https://learningapps.org/display?v=p842e033c20>



Այսպիսով, լեզվական խաղերը լրացնում են լեզվական վարժությունների համակարգը: Դրանք նպաստում են լեզվական գիտելիքների ձեռքբերման դժվարությունների հաղթահարմանը: Խաղը թեթևացնում է սխալների և անհաջողությունների թողած ազդեցությունը: Լինելով գործունեության բավականին լուրջ տեսակ՝ այն միևնույն ժամանակ երեխայի մեջ չի առաջացնում հիասթափության, անհաջողության զգացողություն: Ուսումնական գործընթացը աշխուժացնում են խաղում տեղ գտած հեքիաթային, երևակայական տարրերը, հետաքրքրաշարժ նկարներն ու ուշագրավ բնագրերը: Խաղը անփոխարինելի միջոց է երեխայի երևակայությունը զարգացնելու համար: Երեխաները, խաղի միջոցով սնելով իրենց երևակայությունը, խորացնում և ամրապնդում են անձի շատ արժեքավոր հատկություններ՝ համարձակությունը, վճռականությունը, կազմակերպվածությունը, հնարամտությունը և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կրտսեր դպրոցում լեզվական նյութը չպետք է կազմի դասատվության նպատակ, այլ այն պետք է լինի միայն միջոց նպատակին հասնելու համար, այսինքն՝ միջոց գրական լեզուն ճշտությամբ հասկանալու, շարահյուսորեն ճիշտ, կապակցված, սահուն խոսք կառուցելու համար: Հենց այս են նկատի ունեցել մայրենի լեզվի գործող դասագրքերի հեղինակները, որ ստեղծել են ընթերցանության և լեզվական նյութի միասնական դասագիրք և ընթերցանության ու լեզվական նյութի միաձույլ ուսուցում, որը հնարավորություն է տվել լեզվի ուսուցումն ավելի արդյունավետ ու նպատակային դարձնելու: Այս դեպքում երեխաները քերականական կանոններն ու սահմանումներն անգիր սովորելու փոխարեն լեզվական օրինաչափություններն ինքնուրույնաբար կիրառում են իրենց խոսքում, արդյունքում զարգանում են նրանց մտածողությունը, դատողական ունակությունները, որը և քերականության առջև դրված նպատակն է:

Կրտսեր դպրոցի աշակերտների խոսքն այնքան էլ զարգացած չէ, խոսքում շատ են գրական նորմերին անհամապատասխան բառերն ու արտահայտությունները: Աշակերտները գրական հայերենով հաղորդակցվելիս շատ են կաշկանդվում, հարկավոր է մղել նրանց ազատ արտահայտման և հաղորդակցման: Ուսուցումը պետք է անպայմանորեն կապել կյանքի հետ, որպեսզի աշակերտներին մատչելի ու հասկանալի լինի բացատրվելիք նյութը: Պետք է օրինակները վերցնել աշակերտի կենցաղից, շրջապատող իրականությունից: Ուսուցումը պետք է նաև զուգակցել դաստիարակության հետ, աշակերտների մեջ մշակել բարոյական ու գեղագիտական նորմեր:

Այսպիսով, բանավոր խոսքը ոչ միայն մարդու զարգացած լինելու հիմնական չափանիշներից է, ամենօրյա հաղորդակցման միջոցը, այլև գրավոր խոսքի զարգացման հիմքը, որը պետք է զարգացնել՝ ելնելով կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկություններից: Աշակերտների բանավոր խոսքի զարգացումը հաջող կազմակերպելու համար անհրաժեշտ է նաև ուսուցման մեթոդների ճիշտ ընտրություն և գործադրում: Հաճախ կրտսեր դպրոցականների բանավոր խոսքի զարգացմանը կարող է նպաստել էլեկտրոնային խաղերի, հետաքրքրաշարժ վարժությունների օգտագործումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթական պետական կրթակարգ, Երևան, «Անտարես» հրատարակչություն, 2004, 468 էջ:
2. Ալեքսանյան Ա.Ս., Միջանձնային հաղորդակցման իրականացումը կրթական գործընթացում, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015, 296 էջ:
3. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան 2009, 191 էջ:
4. Թորոսյան Կ., Սարգսյան Վ., Խաչատրյան Հ. Զիրուխյան Կ., «Մայրենի 4», Եր., «Ման-մար» հրատ., 2012թ., 190 էջ:
5. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, 20-րդ դարի մանկավարժական տեսություններ, Ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Երևան, «Նոյան տապան» հրատարակչություն, 2005, 256 էջ:
6. Խոսք և հաղորդակցություն 2: Աշխատանքային տետր / Գ.Հ. Թերզյան, Կ. Թորոսյան, Հ. Խաչատրյան, Երևան, Ջանգակ հր., 2016, 44 էջ:
7. Կրթական վերափոխումները Հայաստանում, Սարդկային զարգացման ազգային զեկույց-2006, Երևան, 2007, 224 էջ:
8. Շահբազյան Տ., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան 1958, 367 էջ:
9. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, 564 էջ:
10. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Գրիգորյան Ս., Խաչատրյան Հ. «Մայրենի 2», Եր., «Ման-մար» հրատ., 2010թ., 161 էջ:
11. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե., «Մայրենի 3», Եր., «Մակմիլան-Արմենիա» հրատ., 2011թ., 160 էջ: